Հիմք ընդունելով Ռոման Ռուբենի Օջինյանի (ծնված՝ 23.07.1989թ.), ով հանդիսանում է նաև Դավիթ Ռաֆիկի Օջինյանի (ծնված՝ 20.09.1990թ.) լիազորված անձը 21.03.2024թ. թիվ 02/5561 դիմումը, 27.05.1976թ. տրված գույքային թերթը, 23.11.2023թ. թիվ 77 ԱԴ 3281165 (նոտարական ակտի կոդ: 843-20231212-67-7545138) լիազորագիրը, 04.04.2023թ. սեփականության իրավունքի թիվ 1646 (նոտարական ակտի կոդ: 594-20230403-105-6808661) և ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1647 (նոտարական ակտի կոդ: 594-2023-0321-84-6773234) վկայագրերը, 19.03.2024թ. տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 1169 (նոտարական ակտի կոդ: 843-20240319-84-7790501), թիվ 1170 (նոտարական ակտի կոդ: 843-20240318-84-7783764), թիվ 1171 (նոտարական ակտի կոդ: 843-20240319-84-7790551), թիվ 1172 (նոտարական ակտի կոդ: 843-20240318-84-7783889) վկայագրերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 16.09.2024թ. տրված շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի մասին թիվ ՎՆ1-310/24 Ի եզրակացությունը, 19.12.2023թ. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023WAMDPS), «Տարոն Սերոբյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը: Բնակելի տունը կառուցվել է 1963-2000թթ.-ին, դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական հողամասի մակերեսը փաստացի կազմում է 698.5քմ: Դեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 190-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չչափաչանցված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1. Հաստատել Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Տավրոս (նախկին Ժդանով թաղ.) 8-րդ փող. 17-րդ հասցեում գտնվող Ռոման Ռուբենի Օջինյանին (1/2) և Դավիթ Ռաֆիկի Օջինյանին

(1/2) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 0.06985 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի պաշտոնակատարի կողմից հաստատված հատակագծի:

2. Ճանաչել Դավիթ Ռաֆիկի Օջինյանի (1/2) և Ռոման Ռուբենի Օջինյանի (1/2) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը՝ մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի, Տավրոս (նախկին Ժդանով թաղ.) 8-րդ փող. 17-րդ հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 0,06985 հա մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Տավրոս թաղամասի 8-րդ փողոց, 17 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 29
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2024 թվականի N 2423

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՆՁՈՐՈՒՑ ԹԱՂ. ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 100 ՀԱՍՑԵԻ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԱՇՈՏ
ՎԱԼՈՂԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Վալողի Հայրապետյանի (ծնված՝ 16.03.1959թ.) 10.05.2024թ. թիվ 02/8503 դիմումը, 16.03.1988թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 06.12.2023թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 9618 (նոտարական ակտի կոդ: 763-20231206-84-7528475) և թիվ 9617 (նոտարական ակտի կոդ: 763-20231122-84-7493874) վկայագրերը, ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 08.05.2024թ. հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2024WQNCJA) հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 04.07.2024թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-227/24 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղ. Երևանյան խճուղի թիվ 100 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 738.5քմ մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1958-1998թթ-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 738.5քմ: Դեկլարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չչափաչանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով **որոշում են**.

- Ճանաչել Աշոտ Վալողի Հայրապետյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղ. Երևանյան խճուղի թիվ 100 հասցեում գտնվող օրինական 738.5քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
- Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
- Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղ. Երևանյան խճուղի թիվ 100 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Երևանյան խճուղի, թիվ 100/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԵՏՐՈՆԱԿԱՍԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2024 թվականի N 2424

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ 2-ՐԴ ԱՎԱՆ, ԹԻՎ 110 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ)
ՀԱՍՏԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼԵՌՆԻԿ ԶԱՆԻԿԻ
ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ
ՀԱՍՏԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնիկ Զանիկի Վարդանյանի դիմումը, 20.12.2023թ. թիվ 7400 (նոտարական ակտի կոդ: 594-20231220-66-7568379) 21.12.2023թ. թիվ 7426 (նոտարական ակտի կոդ: 594-20231221-66-7571444), 20.12.2023թ. թիվ 7399 (նոտարական ակտի կոդ: 594-20231220-66-7568489) հայտարարությունները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 15.08.2024թ. տրված տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-263/24 հ եզրակացությունը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան, թիվ 110 (պայմանական) հասցեում կառուցված բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 399.98քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1990թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 399.98քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1990թ.-ից: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ որոշում եմ.

- Ճանաչել Լեռնիկ Զանիկի Վարդանյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան, թիվ 110 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 399.98քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության շինության նկատմամբ:
- Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
- Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Բուլղարական ավան 2-րդ թաղամաս, 110 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



ԱՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՃՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2024 թվականի N 2425

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 83-Ա որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 495 որոշմամբ ստեղծված դրամական և նյութական օգնություն տրամադրելու համար Վանաձորի համայնքապետարան դիմած քաղաքացիների դիմումների քննարկման հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 10 արձանագրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով՝ որոշում եմ.

1. Վանաձոր համայնքի 2024 թվականի բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10-րդ բաժնի 7-րդ խմբի 1 դասով նախատեսված միջոցներից աջակցության նպատակով 58 /հիսունութ / քաղաքացու հատկացնել 2.500.000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնին՝ մեկամսյա ժամկետում կատարել գումարի վճարում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 29
ք. Վանաձոր



Ցուցակ

Դրամական արժանեցություն ստացած 58 բաղաբացիներ

	Մտից	Ազգանուն	Անուն	Հասցե	Գումարի չափ ՀՀ դրամ
1	15.10.2024/ 02/17318	Ներսիսյան	Նադյա	Ք. Վանաձոր, Ռուսթավի 7/55	50 000 /հիսուն հազար/
2	22.10.2024/ 02/17765	Գևորգյան	Նունե	Ք. Վանաձոր, Ալյուսագործների 45/1	40 000 /քառասուն հազար/
3	22.10.2024/ 02/17761	Բուլղադարյան	Աննա	Ք. Վանաձոր, Քիմիագործների 2փ., 24տ.	50 000 /հիսուն հազար/
4	27.09.2024/ 02/16369	Մերջանյան	Միեր	Ք. Վանաձոր, Չուխաջյան 30/10	50 000 /հիսուն հազար/
5	27.09.2024/ 02/16399	Հայրապետյան	Գրետա	Ք. Վանաձոր, Գր. Լուսավորիչ 2-րդ փ., 10	50 000 /հիսուն հազար/
6	23.10.2024/ 02/17799	Հակոբյան	Նոյեմձար	Շահումյան բնակավայր, 12փ. 3տ.	50 000 /հիսուն հազար/
7	22.10.2024/ 02/17716	Սարգսյան	Արգինա	Ք. Վանաձոր, Ռուսթավի 5/7	40 000 /քառասուն հազար/
8	14.10.2024/ 02/17254	Ղազարյան	Վաչագան	Ք. Վանաձոր, Երևանյան խճ 125/5	40 000 /քառասուն հազար/
9	15.10.2024/ 02/17320	Խաչիկյան	Սեդա	Ք. Վանաձոր, Գրիբոյեդովի 6/61	50 000 /հիսուն հազար/
10	09.10.2024/ 02/16995	Նահապետյան	Իրինա	Ք. Վանաձոր, Շինարարների 3/31	40 000 /քառասուն հազար/
11	10.10.2024/ 02/17072	Կարապետյան	Հայկ	Ք. Վանաձոր, Շինարարների 13/2	50 000 /հիսուն հազար/
12	21.10.2024/ 02/17638	Շողերյան	Կարինե	Գուգարք բնակավայր, 6փ., 54տ.	50 000 /հիսուն հազար/
13	17.10.2024/ 02/17482	Բոյաջյան	Մարիա	Ք. Վանաձոր, Նարեկացի 4/25	40 000 /քառասուն հազար/
14	16.10.2024/ 02/17371	Առաքելյան	Մարգո	Ք. Վանաձոր, Շիրակացի 1/5	50 000 /հիսուն հազար/
15	17.10.2024/ 02/17473	Ամիրապյան	Նելլի	Ք. Վանաձոր, Չոր. Անդրանիկի 18	50 000 /հիսուն հազար/
16	18.10.2024/	Չաբարյան	Յաննա	Ք. Վանաձոր, Աճառյան	50 000 /հիսուն հազար/

	02/17605			13/8	
17	16.10.2024/ 02/17431	Բաբայան	Մարտա	Ք. Վանաձոր, Տ. Մեծի 16/6	40 000 /քառասուն հազար/
18	21.10.2024/ 02/17630	Սաքանյան	Արաքսյա	Ք. Վանաձոր, Լարեկացի 6/14	40 000 /քառասուն հազար/
19	23.10.2024/ 02/17798	Պոստոլյակյան	Ռուբեն	Ք. Վանաձոր, Բաֆֆու 29/1	40 000 /քառասուն հազար/
20	28.10.2024/ 02/18069	Սարգսյան	Լաիրուհի	Ք. Վանաձոր, Տարոն-4, ԶԾԴ-2, 59 դ, 5	30 000 /երեսուն հազար/
21	15.10.2024/ 02/17346	Մալումյան	Սմբատ	Ք. Վանաձոր, Չաքարյան 14/33	30 000 /երեսուն հազար/
22	23.10.2024/ 02/17803	Վարեկյան	Ամայա	Ք. Վանաձոր, Տավրոսի 22/12	50 000 /հիսուն հազար/
23	28.10.2024/ 02/18061	Միսկարյան	Մարտին	Ք. Վանաձոր, Իսահակյան 2 նրբ., 5/27	30 000 /երեսուն հազար/
24	24.10.2024/ 02/17944	Խոնցյան	Աշոտ	Ք. Վանաձոր, Երևանյան խճ., 66/31	50 000 /հիսուն հազար/
25	25.10.2024/ 02/17997	Քոչարյան	Ռուզաննա	Ք. Վանաձոր, Վարդանանց 51/42	30 000 /երեսուն հազար/
26	21.10.2024/ 02/17657	Աղամայան	Անահիտ	Ճահումյան բնակավայր, 1 փ., 19տ.	50 000 /հիսուն հազար/
27	21.10.2024/ 02/17658	Իսրայելյան	Գրիշա	Ճահումյան բնակավայր, 12 փ., 1 նրբ., 2տ.	50 000 /հիսուն հազար/
28	14.10.2024/ 02/17212	Հարությունյան	Արմենուհի	Ք. Վանաձոր, Տերյան 12/10	50 000 /հիսուն հազար/
29	15.10.2024/ 02/17308	Մելիքյան	Արմեն	Ք. Վանաձոր, Համբարձումյան 12/25	50 000 /հիսուն հազար/
30	16.10.2024/ 02/17366	Գալստյան	Արթուր	Ք. Վանաձոր, Կարբիշևի փակ., 8տ.	50 000 /հիսուն հազար/
31	15.10.2024/ 02/17331	Ղաբուզյան	Անահիտ	Ք. Վանաձոր, Ուսանողական 16/49	30 000 /երեսուն հազար/
32	11.10.2024/ 02/17101	Մարկոսյան	Աննա	Ք. Վանաձոր, Տերյան 1 փ., 4/1տ.	40 000 /քառասուն հազար/
33	26.09.2024/ 02/16320	Ավագյան	Ռենատա	Ք. Վանաձոր, Գր. Լուսավորիչ 35/17	40 000 /քառասուն հազար/
34	10.10.2024/ 02/17034	Վարդանյան	Անահիտ	Ք. Վանաձոր, Գրիբոյեդովի 2ա/36	40 000 /քառասուն հազար/
35	10.10.2024/ 02/17077	Հարությունյան	Ռիմա	Ք. Վանաձոր, Լարեկացի 3ա/4	40 000 /քառասուն հազար/

36	11.10.2024/ 02/17115	Սապոնջյան	Ռոբերտ	Ք. Վանաձոր, Տ. Մեծի 54/46	40 000 /քառասուն հազար/
37	15.10.2024/ 02/17301	Գալոյան	Չուրբեղա	Ք. Վանաձոր, Գր. Լուսավորիչ 29/32	40 000 /քառասուն հազար/
38	08.10.2024/ 02/16899	Կիրակոսյան	Ռուզաննա	Ք. Վանաձոր, Արեղյան 14ա/2	50 000 /հիսուն հազար/
39	09.10.2024/ 02/16951	Ղարիբյան	Արմինե	Ք. Վանաձոր, Տ. Մեծի 75/31	50 000 /հիսուն հազար/
40	08.10.2024/ 02/16907	Ղանիեյան	Մհեր	Գուգարք բնակավայր, Կոտեջային 1փ., 3/1	50 000 /հիսուն հազար/
41	08.10.2024/ 02/16881	Չարությունյան	Մանուշակ	Գուգարք բնակավայր, 1փ., 24տ.	40 000 /քառասուն հազար/
42	08.10.2024/ 02/16890	Սաքանյան	Գևորգ	Գուգարք բնակավայր, 6փ. 77տ.	40 000 /քառասուն հազար/
43	08.10.2024/ 02/16894	Արղուշյան	Լուիզա	Ք. Վանաձոր, Մոսկովյան 12/20	40 000 /քառասուն հազար/
44	07.10.2024/ 02/16823	Չարությունյան	Տարոն	Ք. Վանաձոր, Տ. Մեծի 77/39	30 000 /երեսուն հազար/
45	07.10.2024/ 02/16820	Մարգարյան	Արաքսյա	Ք. Վանաձոր, Սուխումի 1/91	30 000 /երեսուն հազար/
46	04.10.2024/ 02/16766	Ղազարյան	Չայկուշ	Ք. Վանաձոր, Դեմիրճյան 28/26	30 000 /երեսուն հազար/
47	04.10.2024/ 02/16741	Ղալեչյան	Անահիտ	Ք. Վանաձոր, Լավարի 21	50 000 /հիսուն հազար/
48	04.10.2024/ 02/16728	Չովսեփյան	Մանվել	Ք. Վանաձոր, Լազյան 25շ. 32բն.	50 000 /հիսուն հազար/
49	04.10.2024/ 02/16754	Աղաջանյան	Արմինե	Ք. Վանաձոր, Չուխաջյան 64/16	30 000 /երեսուն հազար/
50	01.10.2024/ 02/16501	Աթուլյան	Սոնյա	Ք. Վանաձոր, Երևանյան խճ. 129/38	30 000 /երեսուն հազար/
51	26.09.2024/ 02/16312	Վարդանյան	Մարինե	Ք. Վանաձոր, Աղայան 86/36	40 000 /քառասուն հազար/
52	26.09.2024/ 025/16302	Սահակյան	Կաթավիկ	Ք. Վանաձոր, Բուլղարական 1ափան, 24	30 000 /երեսուն հազար/

53	08.10.2024/ 02/16906	Պարզյան	Սուրեն	Ք. Վանաձոր, Նժդեհի 46/1	50 000 /հիսուն հազար/
54	14.10.2024/ 02/17197	Ղազարյան	Աղունիկ	Ք. Վանաձոր, Բարեկամության 6	50 000 /հիսուն հազար/
55	02.10.2024/ 02/16562	Սուկույան	Սլավիկ	Ք. Վանաձոր, Նիզամի 18	50 000 /հիսուն հազար/
56	02.10.2024/ 02/16576	Սեմիրջյան	Վահան	Ք. Վանաձոր, Նիզամի 72	50 000 /հիսուն հազար/
57	02.10.2024/ 02/16578	Ավետիքյան	Ռազմիկ	Ք. Վանաձոր, Չոր. Անդրանիկի 77	50 000 /հիսուն հազար/
58	21.10.2024/ 02/17637	Գալստյան	Նաիրա	Ք. Վանաձոր, Լազյան 35/45	50 000 /հիսուն հազար/

Ընդամենը՝ 2.500.000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Վանաձոր համայնքի ղեկավարի
Պաշտոնակատար



[Handwritten signature]

Ա. Փելեջյան

Վանաձոր համայնքի ղեկավարի
պաշտոնակատարի գլխավոր խորհրդակցական

[Handwritten signature]

Ա. Բերնեցյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2024 թվականի N 2426

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 19 ՀՈՒԼԻՍԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 54
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԸ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 26.08.2024թ. թիվ Կ-26082024-06-0162 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ որոշում եմ.

Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 19 հուլիսի 2024 թվականի թիվ 54 ավարտական ակտը (շահագործման թույլտվություն):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 29
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2024 թվականի N 2427

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 19 ԱՊՐԻԼԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 14
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏՈՒՄ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ)
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմիդա Արամայիսի Աբրահամյանի դիմումը, ով հանդիսանում է նաև Հմայակ Նավասարդի Պողոսյանի լիազորված անձը, Վանաձոր համայնքի ղեկավարի 19 ապրիլի 2019 թվականի թիվ 14 ավարտական ակտը (շահագործման թույլտվություն), 18.10.2024թ. ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքների (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-18102024-06-0186 որոշումը, 2024 թվականի օգոստոսի 5-ի թիվ 5226 լիազորագիրը /նոտարական ակտի կոդ: 594-20240805-90-8202662/, 13.09.2024թ. սեփականության իրավունքի թիվ 6975 վկայագիրը /նոտարական կտի կոդ: 594-20240912-105-8330156/ և 13.09.2024թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 6976 վկայագիրը /նոտարական ակտի կոդ: 594-20240912-84-8330138/, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի ղեկավարի 19 ապրիլի 2024 թվականի թիվ 14 ավարտական ակտի (շահագործման թույլտվություն) 4-րդ կետում «206,97» թվերը փոխարինել «3,77» թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 29
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2024 թվականի N 2428

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 31 ՀՈՒՆԻՍԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 75
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏՈՒՄ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Խորեն Գրիգորյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 31 հուլիսի 2024 թվականի թիվ 75 ավարտական ակտը (շահագործման թույլտվություն), վկայականը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի ղեկավարի 31 հուլիսի 2024 թվականի թիվ 75 ավարտական ակտը (շահագործման թույլտվություն) «Խորեն Գրիգորյանի» բառերից հետո լրացնել «, Քրիստինա Ղազարյանի» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2024թ. հոկտեմբերի 29
ք.Վանաձոր



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2024 թվականի N 2429

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 52Բ/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՏԱՐԱԾՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալբերտ Ռազմիկի Հովհաննիսյանի 04.09.2024 թվականի թիվ 15138 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1930379 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Լուսավորիչի փող թիվ 52բ/2 հասցեում գտնվող տարածքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Գ. Լուսավորիչի փողոց, 52 շենք, 33 տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 30
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2024 թվականի N 2430

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Տ. ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 59/18 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ
ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳԵՎՈՐԳ ՄՈՒՇԵՂԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գևորգ Մուշեղի Սարգսյանի 21.11.2023թ. թիվ 20466 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16082024-06-0050 վկայականը, 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետով՝ **որոշում եմ**.

1. Վանաձոր քաղաքի Տ. Մեծի պողոտա 59/18 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 20.4քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը 19.47քմ) ավտոտնակը և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 20.4քմ մակերեսով հողամասը 10 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրել Գևորգ Մուշեղի Սարգսյանին:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Գևորգ Մուշեղի Սարգսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և դրանով զբաղեցված հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր, ավտոտնակի 1.0քմ-ի համար վարձավճարի չափ սահմանելով ամսական 30 /երեսուն/ դրամ, հողամասի 1.0քմ-ի համար ամսական 24 /քսանչորս/ դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2024 թվականի N 2431

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ 7(ՊԱՅՄԱՆԱԿԱՆ)
ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ
ԶՔԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ,
ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՏԱՑԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ժորա Ալբերտի Փուլյանի 22.06.2023թ. թիվ 10232 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 16.09.2024թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-119/24 ա եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 29.08.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր: 2023JUAX7L), 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Նարեկացու 7 (պայմանական) հասցեում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 34.47քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես 33.78քմ.) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 34.47քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Նարեկացու 7 (պայմանական) հասցեի արևելյան մասում գտնվող 0.000361հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը խառը կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Նարեկացու 7 (պայմանական) հասցեի արևելյան մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք ,Վանաձոր ք., Գ. Նարեկացու փողոց,115 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2024թ. հոկտեմբերի 30
ք.Վանաձոր



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2024 թվականի N 2432

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 81/3,
ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 81/1 ԵՎ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 81/1-1
ՀԱՍՅԵՆԵՐՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՍԱՍՈՒՆ ԿԱՄՈՅԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ
ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սասուն Կամոյի Ծառուրյանի 18.10.2024 թվականի թիվ 02/17585 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 02092024-06-0053, 09112017-06-0032 և 02092024-06-0052 վկայականները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «Գասպար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանքը, /ծածկագիր: 2024ZMLEUU/, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

1. Միավորել Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Տիգրան Մեծի պողոտա 81/1, Տիգրան Մեծի պողոտա 81/1-1 և Տիգրան Մեծի պողոտա 81/3 հասցեներում գտնվող Սասուն Կամոյի Ծառուրյանին սեփականության իրավունքով պատկանող 0,029620 հա ընդհանուր մակերեսով հողամասեր և դրա վրա գտնվող 278.1 քմ շինությունները համաձայն «Գասպար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից տրված հատակագծի:

2. 111.45 քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն Լոռու մարզ, համայնք Վանաձոր, Վանաձոր ք. Տիգրան Մեծի պողոտա 81/3 և 81Ա հասցեների անշարժ գույքերի համար, տվյալ անշարժ գույքի բաժնեմասը 0.011145 հա հողամասի նկատմամբ կազմում է 0.003715 հա:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Տիգրան Մեծի պողոտա, 81/3 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2024 թվականի N 2433

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑ 24-1
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՄԵՆ ՍԵՐԺԻԿԻ ՄԽՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ
ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Սերժիկի Մխոյանի լիազորված անձ Վահան Հայկի Պապոյանի 12.08.2024 թվականի թիվ 02/13714 դիմումը, 26.04.2022 թվականի թիվ 1575 լիազորագիրը /Նոտարական ակտի կոդ: 843-20220329-79-5792029/, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21032022-06-0013 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, Գասպար Վեքիլյան ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը մասնագիտական եզրակացությունը, մասնագիտական եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Նալբանդյան փողոց 24-1 հասցեում գտնվող, Արմեն Սերժիկի Մխոյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն Գասպար Վեքիլյան ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Նալբանդյան փողոց 24-1 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա.0.5142 հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 485.72 քմ շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Մ. Նալբանդյան փողոց, 24/10 գազալցակայան:

բ.0.0700 հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 191.06 քմ շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Մ. Նալբանդյան փողոց, 24/9 շինություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2024 թվականի N 2434

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 14 ՇԵՆՔԻ
ԱՐԵՎԱՏՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԱՌԱՆԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ
ԶԲԱՂԵՑՎԱԾ ՌԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՄԱՌԱՆԸ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Բաբկենի Պետրոսյանի 24.01.2024 թվականի թիվ 02/1515 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 04.11.2024 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի մասին թիվ ՎՆ 1-122/24ա եզրակացությունը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 13.05.2024 թվականի ավագանու թիվ 31 որոշումով /988 կետ/, «Գասպար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների քննությամբ, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 11.12.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր: 202397NDT2), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տերյան փողոց 14 շենքի արևմտյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 11.4 քմ ընդհանուր արտաքին մակերեսով /8.04 քմ ներքին մակերեսով /մառանի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 11.4 քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացում անձին մառանը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով Արմեն Բաբկենի Պետրոսյանին ուղղակի ֆիզմարքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տերյան փողոց 14 շենքի արևմտյան մասում գտնվող մառանին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Վ. Տերյան փողոց, 14/24 մառան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2024 թվականի N 2435

ԱՆԻ ԳԵՂԱՄԻ ՍԻՆԴՈՅԱՆԻ ՀԵՏ ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԿՆՔՎԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 05 մայիսի 2021 թվականի թիվ 961 որոշումը, 06 մայիսի 2021 թվականին կնքված թիվ 14 աշխատանքային պայմանագիրը, 01.08.2024թ. համաձայնագիրը, ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ որոշում եմ.

- 2024 թվականի հոկտեմբերի 31-ից լուծել Վանաձորի համայնքապետարանի և ԵՄ «Դաշինք հանուն կանաչ և կայուն կառավարման» ծրագրի շրջանակներում որպես ծրագրի օգնական Անի Գեղամի Սինդոյանի հետ 2021 թվականի մայիսի 06-ին կնքված թիվ 14 աշխատանքային պայմանագիրը:
- Ֆինանսատնտեսագիտական բաժնին՝ կատարել վերջնահաշվարկ:
- Ընդունվել է աշխատանքի 2021 թվականի մայիսի 06-ին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 31
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2024 թվականի N 2436

ԱՐՄԻՆԵ ԱՇՈՏԻ ՓԱՆՈՅԱՆԻ ՀԵՏ ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԿՆՔՎԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 23 ապրիլի 2021 թվականի թիվ 863 որոշումը, 26 ապրիլի 2021 թվականին կնքված թիվ 12 աշխատանքային պայմանագիրը, 01.08.2024թ. համաձայնագիրը, ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ որոշում եմ.

1. 2024 թվականի հոկտեմբերի 31-ից լուծել Վանաձորի համայնքապետարանի և ԵՄ «Դաշինք հանուն կանաչ և կայուն կառավարման» ծրագրի շրջանակներում որպես ծրագրի հաշվետվությունների գծով մասնագետ Արմինե Աշոտի Փանոյանի հետ 2021 թվականի ապրիլի 01-ին կնքված թիվ 12 աշխատանքային պայմանագիրը:

2. Ֆինանսատնտեսագիտական բաժնին՝ կատարել վերջնահաշվարկ:

3. Ընդունվել է աշխատանքի 2021 թվականի ապրիլի 26-ին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 31
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2024 թվականի N 2437

ՆԱՏԱԼՅԱ ԷԼՎԱՆԻ ԼԱՓԱՌԻՐԻ ՀԵՏ ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԿՆՔՎԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 30 մարտի 2021 թվականի թիվ 644, 28 ապրիլի 2021 թվականի թիվ 936 որոշումները, 01 ապրիլի 2021 թվականին կնքված թիվ 01 աշխատանքային պայմանագիրը, 01.08.2024թ. համաձայնագիրը, ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ **որոշում եմ**.

1. 2024 թվականի հոկտեմբերի 31-ից լուծել Վանաձորի համայնքապետարանի և ԵՄ «Դաշինք հանուն կանաչ և կայուն կառավարման» ծրագրի շրջանակներում որպես ծրագրի ղեկավար Նատալյա Էլվանի Լափառիի հետ 2021 թվականի ապրիլի 01-ին կնքված թիվ 01 աշխատանքային պայմանագիրը:

2. Ֆինանսատնտեսագիտական բաժնին՝ կատարել վերջնահաշվարկ:

3. Ընդունվել է աշխատանքի 2021 թվականի ապրիլի 01-ին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 31
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2024 թվականի N 2438

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ ԹԱՂԱՄԱՍԻ 21-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 20/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ, ՌՈՒՔԻԿ ՌՈՒՔԵՆԻ ԲՐՈՒՏՅԱՆԻՆ, ՌՈՒՔԵՐՏ ՌՈՒՔԵՆԻ ԲՐՈՒՏՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏԵՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոբերտ Ռուբենի Բրուտյանի, Ռուբիկ Ռուբենի Բրուտյանի 14.10.2024 թվականի թիվ 02/17194 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08102024-06-0051 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1.Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Տավրոս թաղամասի 21-րդ փողոց թիվ 20/1 հասցեում գտնվող, Ռոբերտ Ռուբենի Բրուտյանի, Ռուբիկ Ռուբենի Բրուտյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱԶ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի, Տավրոս թաղամասի 21-րդ փողոց թիվ 20/1 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա.0.061045 հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող բնակելի նշանակության 280.34 քմ մակերեսով բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տավրոս թաղամասի 21-րդ փողոց, 20/1 բնակելի տուն:

բ.0.066475 հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 80քմ մակերեսով բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տավրոս թաղամասի 21-րդ փողոց, 20/2 շինություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2024 թվականի N 2439

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 07 ՄԱՐՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 647 ՈՐՈՇՈՒՄՆ
ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը և ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով՝ որոշում եմ

- Հաստատել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
- Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 07 մարտի 2024 թվականի «Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը հաստատելու և Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 28 սեպտեմբերի 2021 թվականի թիվ 2005 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 647 որոշումը:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 31
ք. Վանաձոր

Վանաձոր համայնքի ղեկավարի
« 31 » հոկտեմբերի 2024 թվականի
թիվ 2439 որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

68. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) աշխատողների աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը:

2. Աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը պարտադիր է Աշխատակազմի բոլոր աշխատողների համար:

3. Աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգին (փոփոխություններին, լրացումներին) պարտադիր իրազեկվում են Աշխատակազմի բոլոր աշխատողները՝ ստորագրությամբ կամ էլեկտրոնային փոստին ծանուցմամբ կամ ՀԿՏ համակարգի միջոցով:

4. Աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգով չնախատեսված հարցերը կարգավորվում են «Համայնքային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք), Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, աշխատանքային պայմանագրով, ինչպես նաև ներքին իրավական ակտերով:

5. Աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները կանոնակարգում են աշխատողների՝ աշխատանքային պայմանագրի կողմերի հիմնական իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, աշխատանքի ռեժիմը, հանգստի ժամանակը, աշխատողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցները, աշխատողների օրական կամ շաբաթական աշխատաժամանակի հաշվառմանը, աշխատանքում (աշխատավայրում) բռնության կամ սեռական ոտնձգության արգելքին, ինչպես նաև աշխատանքային հարաբերություններին վերաբերող այլ հարցեր:

6. Աշխատանքային կարգապահությունն աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, աշխատանքային պայմանագրերով, գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված վարքագծի կանոններն են, որոնց պարտավոր են ենթարկվել բոլոր աշխատողները:

7. Կարգապահական ներքին կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) Աշխատակազմի աշխատողներ՝ համայնքային ծառայողներ և այլ աշխատողներ.

2) Աշխատակազմի համայնքային ծառայողներ՝ Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններ զբաղեցնող անձինք.

3) Աշխատակազմի այլ աշխատողներ՝ համայնքի ղեկավարի տեղակալներ, համայնքի ղեկավարի խորհրդականներ, համայնքի ղեկավարի օգնականներ, մամուլի քարտուղար, համայնքի ավագանու խմբակցության փորձագետներ, բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարներ և տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք, ժամկետային աշխատանքային պայմանագրերով այլ աշխատողներ:

8. Աշխատողի անմիջական ղեկավար.

1) Աշխատակազմի համայնքային ծառայողների համար՝ նրանց պաշտոնի անձնագրով նախատեսված այն պաշտոնատար անձինք, որոնց անմիջականորեն ենթակա ու հաշվետու են համայնքային ծառայողները.

2) համայնքի ղեկավարի տեղակալների, համայնքային հայեցողական պաշտոնների, Աշխատակազմի քարտուղարի, Աշխատակազմի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և աուդիտորների համար՝ համայնքի ղեկավարը.

3) ստորաբաժանումների ղեկավարների (բացառությամբ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի), Աշխատակազմի ստորաբաժանումների կազմում չընդգրկված համայնքային ծառայողների, տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողների համար՝ Աշխատակազմի քարտուղարը.

4) Աշխատակազմի ստորաբաժանումների այլ համայնքային ծառայողների և մյուս աշխատողների համար՝ այդ ստորաբաժանման ղեկավարը:

9. Աշխատանքի վայր.

1) Աշխատակազմի վարչական շենքը՝ ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 22

2) Վարչական ղեկավարների նստավայրերը՝

գ.Դարպաս, 3-րդ փողոց, 5

գ.Շահումյան, 1-ին փողոց, 66

գ.Գուգարք, 6-րդ փողոց, 47

10. Աշխատատեղ՝ աշխատանքի վայրում համապատասխան ստորաբաժանմանը կամ աշխատողին հատկացված աշխատասենյակը:

2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳՈՒԿԱՆՈՆԸ

11. Աշխատակազմում սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ երկու հանգստյան օրով՝ շաբաթ և կիրակի (այսուհետ՝ հանգստյան օրեր):

12. Աշխատակազմում աշխատանքային օրը սկսվում է ժամը 9:00-ին և ավարտվում՝ ժամը 18:00-ին (այսուհետ՝ աշխատանքային ժամեր):

13. Աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել շաբաթական 40 ժամից, իսկ ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը չի կարող անցնել 8 աշխատանքային ժամից, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, և այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերի:

14. Աշխատակազմում աշխատանքային օրվա ընդմիջումը սկսվում է ժամը 13:00-ին և ավարտվում ժամը 14:00-ին (այսուհետ՝ ընդմիջման ժամ): Ընդմիջման ժամը չի ներառվում աշխատաժամանակում:

15. Աշխատակազմի աշխատողը ընդմիջման ժամն օգտագործում է իր հայեցողությամբ, աշխատողն իրավունք ունի ընդմիջման ժամանակահատվածում բացակայելու աշխատավայրից:

16. Արտաժամյա, հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքի ներգրավելիս Աշխատակազմի աշխատողների վրա տարածվում են աշխատանքային օրերի համար օրենքով և սույն կանոնակարգով սահմանված դրույթների բոլոր պահանջները:

17. Ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերի, որոնք սահմանվում են «Տոների և հիշատակի օրերի մասին» օրենքով, նախօրյակին աշխատանքային օրվա տևողությունը կրճատվում է մեկ ժամով, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված դեպքերի:

18. Աշխատակազմում հարգելի են համարվում աշխատանքից բացակայության այն դեպքերը, որոնք կապված են.

1) աշխատողի կողմից, իր ծառայողական (աշխատանքային) պարտականությունները կատարելու և լիազորություններն իրականացնելու, ինչպես նաև իրավական ակտերով նախատեսված այլ անհրաժեշտությունից ելնելով, աշխատանքի վայրից դուրս այլ վայրեր

մեկնելու հետ, որը կատարվում է աշխատողի անմիջական ղեկավարի բանավոր թույլտվությամբ կամ համապատասխան փաստաթղթային ձևակերպմամբ.

2) համայնքային ծառայողների սահմանված կարգով վերապատրաստման հետ (վերապատրաստման դասընթացներին անհարգելի պատճառներով չմասնակցելը համարվում է աշխատանքից անհարգելի բացակայություն և որպես աշխատանքային կարգապահական խախտում հանգեցնում է համայնքային ծառայողի համար Օրենքով նախատեսված կարգապահական պատասխանատվության).

3) ամենամյա արձակուրդում գտնվելու ժամանակահատվածի հետ.

4) նպատակային (հոլիության և ծննդաբերության արձակուրդ, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդ, ուսումնական արձակուրդ, պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար տրամադրվող արձակուրդ, չվճարվող արձակուրդ, հայրության արձակուրդ) արձակուրդում գտնվելու ժամանակահատվածի հետ.

5) աշխատողի կողմից, իր ծառայողական (աշխատանքային) պարտականությունները կատարելուն և լիազորություններն իրականացնելուն համատեղ գիտական, մանկավարժական, ստեղծագործական, ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող գործունեությամբ զբաղվելու հետ, որի մասին աշխատողն իր անմիջական ղեկավարին և Աշխատակազմի քարտուղարին նախօրոք ներկայացնում է սահմանված կարգով տրված և հաստատված տեղեկանքը և աշխատանքից բացակայելու ժամանակացույցը ու ստանում է վերջիններիս գրավոր համաձայնությունը.

6) աշխատողի ժամանակավոր անաշխատունակության, հիվանդության, անկանխատեսելի դեպքերի և այլ հարգելի պատճառների հետ՝ մեկից ավելի օր տևողությամբ, որի մասին աշխատողը պարտավոր է իր անմիջական ղեկավարին ներկայացնել հարգելի բացակայությունը հաստատող համապատասխան փաստաթուղթ (անաշխատունակության թերթիկ, բժշկի տեղեկանք, փաստերը հիմնավորող՝ պատճառաբանված զեկուցագիր և այլն).

7) անձնական գործերով, խիստ անհրաժեշտության դեպքում աշխատանքային ժամերին աշխատողը կարող է բացակայել աշխատավայրից տարեկան մինչև 72 ժամ՝ առանց աշխատավարձից որևէ պահման, զեկուցագրի հիման վրա անմիջական ղեկավարի համաձայնությամբ (ձև3): Այդ ժամերը չեն կարող օգտագործվել իրար հաջորդող մի քանի աշխատանքային օր բացակայելու նպատակով.

8) առանձին դեպքերում, երբ Աշխատակազմի աշխատողը անկանխատեսելի պատճառներով չի կարողացել առավոտյան ներկայանալ աշխատանքի այդ մասին տեղեկացնում է իր անմիջական ղեկավարին և աշխատանքի ներկայանալիս բացակայության պատճառի մասին զեկուցագիրը (փաստաթղթային կամ էլեկտրոնային) ներկայացնում է անմիջական ղեկավարին (ձև 3): Չեկուցագիրը նախապատրաստում է աշխատողը, անմիջական ղեկավարի համաձայնությունը ստանալուց հետո, ներկայացնում Աշխատակազմի քարտուղարին:

19. Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ զեկուցագրերի հաշվառումը իրականացվում է անձնակազմի կառավարման գործառույթներ իրականացնող մասնագետի կողմից:

20. Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ Աշխատակազմում (այդ թվում՝ վարչական ղեկավարների նստավայրերում) վարվում է Աշխատակազմի աշխատողների աշխատանքի հաճախումների հաշվառման մատյան:

21. Աշխատակազմի աշխատողները ստորագրում են աշխատանքի հաճախումների հաշվառման մատյանում՝ աշխատանքի վայր ներկայանալիս: Անցաքարտերի կիրառման դեպքում՝ աշխատողների հաճախումները հաշվառվում են էլեկտրոնային համակարգով:

3. ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

22. Աշխատակազմի աշխատողին ամենամյա արձակուրդ տրամադրվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

23. Աշխատակազմի աշխատողին ամենամյա նվազագույն արձակուրդ է տրվում 20 աշխատանքային օր տևողությամբ:

24. Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող Աշխատակազմի աշխատողներին այդ արձակուրդը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված տևողությամբ և կարգով:

25. Ամենամյա լրացուցիչ արձակուրդը միացվում է ամենամյա նվազագույն արձակուրդին և կարող է տրամադրվել միասին կամ առանձին՝ յուրաքանչյուր աշխատանքային տարվա համար: Ամենամյա արձակուրդը մասերով տրամադրելու դեպքում ամենամյա արձակուրդի մասերից մեկը պետք է կազմի առնվազն 10 աշխատանքային օր՝ հնգօրյա աշխատանքային շաբաթի դեպքում:

26. Արձակուրդ տրամադրելու վերաբերյալ դիմումն աշխատողն անմիջական ղեկավարի նշագրումով ներկայացնում է իրեն պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:

27. Աշխատակազմի աշխատողին ամենամյա արձակուրդից հետո կանչելն իրականացվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 166-րդ հոդվածով սահմանված կարգով:

28. Մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող աշխատողներին՝ դասախոսություններին մասնակցելու, ստուգաթղթեր և քննություններ հանձնելու ժամանակաշրջանում, յուրաքանչյուր տարի տրվում է ուսումնական արձակուրդ:

29. Տեղափոխված ամենամյա արձակուրդը կամ ամենամյա արձակուրդի տեղափոխված մասը, որպես կանոն, տրամադրվում է նույն աշխատանքային տարում, բայց ոչ ուշ, քան 18 ամսվա ընթացքում՝ սկսած այն աշխատանքային տարվա վերջից, որի համար աշխատողին չի հատկացվել կամ մասնակի է հատկացվել ամենամյա արձակուրդը: Աշխատողի միջնորդությամբ կամ համաձայնությամբ ամենամյա արձակուրդը կամ դրա չօգտագործված մասը կարող է տեղափոխվել և միացվել հաջորդ տարվա ամենամյա արձակուրդին:

4. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՓՈԽՎԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

30. Աշխատակազմի ղեկավարությունը (համայնքի ղեկավարը, համայնքի ղեկավարի տեղակալը, Աշխատակազմի քարտուղարը, Աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները) աշխատանքային կարգապահության պահպանման հետ կապված, իր լիազորությունների սահմաններում պարտավոր է.

1) աշխատողների համար ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նրանց վերապահված իրավունքների և պարտականությունների ճշգրիտ և ժամանակին կատարման, ինչպես նաև նրանց ներկայացվող սահմանափակումների պահպանման համար անհրաժեշտ երաշխիքներ.

2) աշխատողներին ապահովել համապատասխան աշխատանքով, նրանց ծանոթացնել աշխատանքային պայմաններին և պատշաճ կազմակերպել աշխատանքների կատարումը.

3) աշխատողների համար իրենց ծառայողական (աշխատանքային) պարտականությունների կատարման և լիազորությունների իրականացման նպատակով ապահովել օրենքով սահմանված՝ պատշաճ, անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ սոցիալ-աշխատանքային երաշխիքների իրացումը.

4) նախատեսված ժամկետում և սահմանված չափով վճարել աշխատողի աշխատավարձը.

5) աշխատողներին չտալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող, ինչպես նաև հանձնարարականներ տվողի և կատարողի լիազորությունների շրջանակներից դուրս հանձնարարականներ.

6) աշխատողներին ծանոթացնել Աշխատակազմի գործադարության կարգի, անվտանգության տեխնիկայի կանոնների, սույն կանոնակարգի հետ, ինչպես նաև ապահովել

դրանց կատարումը, իսկ համայնքային ծառայողներին՝ նաև Համայնքային ծառայողի վարքագծի կանոնադրքին.

7) ապահովել աշխատողների առաջին բուժօգնությունը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում բուժփմնարկություն տեղափոխելը.

8) ժամանակին արձագանքել աշխատողների աշխատանքային կարիքներին ու պահանջներին, բարելավել նրանց աշխատանքի պայմանները.

9) ապահովել սույն կանոնակարգի կատարումը և ժամանակին արձագանքել դրանց խախտումներին:

31. Սույն կանոնակարգի 30-րդ կետի ենթակետերում նշված պարտականությունների հերթականությունը չի ընդգծում դրանց առաջնահերթությունը:

32. Աշխատակազմի ղեկավարությունն ունի նաև աշխատանքային կարգապահության պահպանման հետ կապված այլ իրավական ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

33. Աշխատակազմի համայնքային ծառայողը յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո մեկշաբաթյա ժամկետում պարտավոր է իր անմիջական ղեկավարին ներկայացնել գրավոր հաշվետվություն տվյալ կիսամյակում իր կատարած աշխատանքների մասին, որի վերաբերյալ անմիջական ղեկավարը եռօրյա ժամկետում պարտավոր է տալ գրավոր եզրակացություն (դրական կամ բացասական):

34. Աշխատակազմի աշխատողը աշխատանքային կարգապահության պահպանման մասով պարտավոր է.

1) պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, Աշխատակազմի քարտուղարի հրամանների, իր պաշտոնի անձնագրի, այլ իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև ժամանակին ու ճշգրիտ կատարել դրանցով սահմանված հիմնական, ծառայողական (աշխատանքային) պարտականությունները և լիազորությունները, պահպանել դրանցով նախատեսված սահմանափակումները.

2) ժամանակին և պատշաճ կատարել իր անմիջական ղեկավարի՝ սահմանված կարգով, իր լիազորությունների շրջանակներում տրված հանձնարարականները.

3) պահպանել Աշխատակազմի գործավարության կարգը և սույն կանոնակարգը.

4) պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված էթիկայի կանոնները.

5) խնամքով վերաբերվել ծառայողական (աշխատանքային) պարտականությունների և լիազորությունների, ինչպես նաև հանձնարարված աշխատանքների կատարման նպատակով հատկացված տեխնիկական և մյուս նյութական միջոցներին, ճիշտ և նպատակային օգտագործել դրանք.

6) աշխատանքի վայրում պահպանել անվտանգության տեխնիկայի, էլեկտրաէներգիայի օգտագործման, հակահրդեհային կանոնների պահանջները.

7) աշխատանքի ժամերին մշտապես գտնվել աշխատանքի վայրում կամ պաշտոնական կամ ծառայողական (աշխատանքային) անհրաժեշտությունից ելնելով մեկնած մյուս վայրերում և առանց ծառայողական անհրաժեշտության կամ անհարգելի պատճառներով չբացակայել այդ վայրից.

8) աշխատանքի վայրում աշխատանքային ժամերին, առանց ծառայողական (աշխատանքային) պարտականությունների և լիազորությունների իրականացման անհրաժեշտության, չբացակայել աշխատատեղից.

9) օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս չխաթարել այլ անձանց բնականոն գործունեությունը.

10) աշխատասենյակում պահպանել կարգուկանոն.

11) ծառայողական (աշխատանքային) պարտականությունների կատարման և լիազորությունների իրականացման անհրաժեշտությունից ելնելով՝ մեկնել գործուղման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

12) մասնակցել հերթական և ընթացիկ կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին:

13) համայնքային ծառայողները՝ պահպանել համայնքային ծառայողի վարքագծի կանոնակարգով սահմանված կանոնները:

35. Սույն կանոնակարգի 34-րդ կետի ենթակետերում նշված պարտականությունների հերթականությունը չի ընդգծում դրանց առաջնահերթությունը:

36. Աշխատակազմի աշխատողն ունի նաև աշխատանքային կարգապահության պահպանման հետ կապված այլ իրավական ակտերով, ինչպես նաև սույն կանոնակարգով նախատեսված այլ պարտականություններ:

37. Աշխատակազմի աշխատողներին, աշխատանքային կարգապահության պահպանման հետ կապված, արգելվում է.

1) աշխատանքային ժամերին կամ աշխատատեղում օգտագործել ոգելից խմիչք կամ աշխատանքի ներկայանալ ոգելից խմիչք օգտագործած վիճակում:

2) աշխատանքային ժամերին զբաղվել իր ծառայողական (աշխատանքային) պարտականությունների և լիազորությունների հետ չկապված ցանկացած այլ գործունեությամբ, բացառությամբ Օրենքով, իրավական այլ ակտերով, ինչպես նաև սույն կանոնակարգով սահմանված դեպքերի:

3) առանց ծառայողական անհրաժեշտության՝ օգտվել ծառայողական հեռախոսների միջքաղաքային կամ բջջային հեռախոսակապերից, ինչպես նաև կապի մյուս միջոցներից:

4) ոչ ծառայողական նպատակներով օգտագործել ծառայողական նպատակներով հատկացված տեխնիկական և նյութական մյուս միջոցները:

5) դրսևորել հասարակության կողմից անընդունելի այնպիսի վարքագիծ, որը կարող է խոչընդոտել ամենօրյա աշխատանքային բնականոն գործունեության ընթացքին:

38. Աշխատակազմի աշխատողներին կարող են ներկայացվել նաև աշխատանքային կարգապահության պահպանման հետ կապված իրավական ակտերով նախատեսված այլ սահմանափակումներ:

5. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼԸ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼԸ

39. Աշխատակազմի համայնքային ծառայողները ենթակա են խրախուսանքի՝ Օրենքով, Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով, իսկ Աշխատակազմի մյուս աշխատողները՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

40. Երկարամյա ծառայության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար համայնքային ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները.

- 1) շնորհակալության հայտարարում:
- 2) միանվագ դրամական պարգևատրում:
- 3) հուշանվերով պարգևատրում:
- 4) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում:
- 5) կարգապահական տույժի հանում:

41. Աշխատակազմի համայնքային ծառայողների նկատմամբ կիրառվում են Օրենքով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով նախատեսված խրախուսանքի տեսակները, իսկ Աշխատակազմի մյուս աշխատողների նկատմամբ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված խրախուսանքի տեսակները:

42. Համայնքային ծառայողի նկատմամբ խրախուսանքները կիրառում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

43. Աշխատանքային կարգապահության խախտումներ թույլ տալու դեպքում Աշխատակազմի աշխատողներն ենթակա են կարգապահական տույժի:

44. Աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարքագծի կանոնները որևէ այլ կերպ խախտելը:

45. Սույն կանոնակարգի ցանկացած պահանջի խախտումը՝ որպես կարգապահության խախտում, հանգեցնում է Աշխատակազմի համայնքային ծառայողների համար՝ Օրենքով, Աշխատակազմի մյուս աշխատողների համար՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված կարգապահական պատասխանատվության:

46. Աշխատակազմի համայնքային ծառայողների համար՝ Օրենքով, Աշխատակազմի մյուս աշխատողների համար՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով չնախատեսված կարգապահական տույժի կիրառումն արգելվում է:

47. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները վերազանցելու, աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը խախտելու դեպքերում օրենքով սահմանված կարգով համայնքային ծառայողի նկատմամբ կիրառվում են կարգապահական հետևյալ տույժերը.

1) նախազգուշացում.

2) նկատողություն.

3) խիստ նկատողություն.

4) համայնքային ծառայողին նույն պաշտոնում աշխատելու ժամանակահատվածում շնորհված ավելի բարձր դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով.

5) զբաղեցրած պաշտոնից ազատում:

48. Եթե համայնքային ծառայողը իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նրա նկատմամբ կիրառված կարգապահական տույժը համարվում է հանված: Կարգապահական տույժը կարող է հանվել մինչև մեկ տարին լրանալը՝ Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված խրախուսանքի տեսակի կիրառման միջոցով, եթե համայնքային ծառայողը թույլ չի տվել կարգապահական նոր խախտում և իրեն դրսևորել է որպես բարեխիղճ ծառայող: Միաժամանակ կարող է հանվել Աշխատակազմի աշխատողի նկատմամբ նշանակված միայն մեկ կարգապահական տույժ:

49. Սույն կանոնակարգի 48-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված կարգապահական տույժերը համայնքային ծառայողի նկատմամբ կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, իսկ 4-րդ ենթակետով նախատեսված կարգապահական տույժը՝ համապատասխան ավելի բարձր դասային աստիճան շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

50. Կարգապահական տույժի ենթարկելու ժամանակ համայնքային ծառայողներին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը պարտավոր է թույլ չտալ աշխատողների անձնական արժանապատվության նվաստացում:

51. Մինչև կարգապահական տույժ նշանակելը կարգապահական տույժ կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարգապահական խախտման վերաբերյալ պետք է գրավոր բացատրություն պահանջի կարգապահական խախտում թույլ տված համայնքային ծառայողից:

52. Կարգապահական տույժերը Աշխատակազմի համայնքային ծառայողների նկատմամբ կիրառվում, ինչպես նաև դրանց հետ կապված հարցերը կարգավորվում են՝ Օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի «Համայնքային ծառայողի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու կարգը հաստատելու մասին» N 1003-Ն որոշմամբ հաստատված կարգով և սույն կանոնակարգով սահմանված դեպքերում և կարգով, իսկ Աշխատակազմի մյուս աշխատողների նկատմամբ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ և սույն կանոնակարգով սահմանված դեպքերում և կարգով:

53. Աշխատակազմի աշխատողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար իրավական հիմքեր են հանդիսանում նրանց կողմից իրենց վերապահված ծառայողական (աշխատանքային) պարտականությունները անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ծառայողական լիազորությունները վերազանցելու, աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը խախտելու փաստը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև դրանց վերաբերյալ աշխատողների և նրանց անմիջական ղեկավարների համապատասխան զեկուցագրերը:

54. Աշխատակազմի մյուս աշխատողների նկատմամբ կարգապահական տույժերը կիրառվում են նրանց պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի անհատական իրավական ակտով:

55. Կարգապահական տույժի կիրառման դեպքում հաշվի է առնվում խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը:

56. Հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:

57. Միևնույն կարգապահական խախտումը մեկից ավելի աշխատողների կողմից կատարվելու դեպքում յուրաքանչյուր աշխատողի վերաբերյալ տրվում է կարգապահական տույժ նշանակելու մասին առանձին անհատական իրավական ակտ:

58. Կարգապահական տույժի կիրառումը Աշխատակազմի աշխատողին չի ազատում համապատասխան իրավական ակտերով սահմանված իր ծառայողական (աշխատանքային) պարտականությունների և լիազորությունների կատարումից, որոնք չկատարելու, ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև վերազանցելու համար աշխատողը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

59. Կարգապահական տույժ կիրառելը Աշխատակազմի աշխատողին չի ազատում օրենքով նախատեսված պատասխանատվության մյուս տեսակներից:

60. Աշխատակազմի աշխատողների նկատմամբ նշանակված կարգապահական տույժը (տույժերը) հանելու հետ կապված՝ սույն կանոնակարգով չնախատեսված հարցերը կարգավորվում են Օրենքով և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով:

61. Կարգապահական տույժ նշանակելու մասին անհատական իրավական ակտը համայնքային ծառայողները կարող են բողոքարկել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի «Համայնքային ծառայողի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու կարգը հաստատելու մասին» N 1003-Ն որոշմամբ սահմանված կարգով, դատական կարգով, իսկ մյուս աշխատողները՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

62. Աշխատակազմի աշխատողները աշխատանքի են ներկայանում խնամված, դասական (գործնական) ոճի մեղմ երանգի հագուստով:

7. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԵՌԱՎԱՐ ԵՂԱՆԱԿՈՎ

63. Գործատուի և աշխատողի փոխադարձ համաձայնությամբ, աշխատողներն իրենց աշխատանքային պարտականությունները կարող են կատարել նաև հեռավար եղանակով՝ հետևյալ կարգով.

1) աշխատանքները հեռավար եղանակով իրականացնելու համար (անհրաժեշտության դեպքում) համապատասխան հիմնավորումներով.

ա. ստորաբաժանումների մասով՝ ստորաբաժանումների ղեկավարները տվյալ ստորաբաժանման համապատասխան պաշտոնների ցանկը ներկայացնում են Աշխատակազմի քարտուղարին.

բ. հայեցողական պաշտոն գբաղեցնող անձանց մասով՝ Աշխատակազմի քարտուղարը համապատասխան պաշտոնների ցանկը ներկայացնում է համայնքի ղեկավարին.

գ. այլ աշխատակիցների մասով՝ պաշտոնների ցանկը կազմում է Աշխատակազմի քարտուղարը:

2) ցանկում ներառվում են այն պաշտոնները, որոնց բնույթը թույլ է տալիս աշխատանքային պարտականությունները նաև հեռավար եղանակով կատարել՝ նշելով հեռավար եղանակով աշխատելու ժամանակահատվածը՝ շաբաթվա որոշակի օրեր, երբ աշխատող-գործատու փոխադարձ համաձայնությամբ, աշխատանքային պարտականությունները կարող են իրականացվել հեռավար եղանակով (կարող է ընտրվել, օրինակ՝ շաբաթվա ընթացքում մեկ կամ մի քանի օր, որի ընթացքում բոլոր աշխատողները (եթե աշխատանքի բնույթը թույլ է տալիս աշխատանքային պարտականությունները կատարել նաև հեռավար եղանակով և առկա է փոխադարձ համաձայնություն) կամ աշխատողների մի մասը (որոնց աշխատանքի բնույթը թույլ է տալիս աշխատանքային պարտականությունները կատարել նաև հեռավար եղանակով և առկա է փոխադարձ համաձայնություն) կարող են աշխատանքային պարտականությունները կատարել հեռավար եղանակով) կամ օրվա մեջ քանի ժամ (կարող են սահմանվել նաև նախընտրելի ժամեր), երբ աշխատողը կարող է աշխատող-գործատու փոխադարձ համաձայնությամբ աշխատել հեռավար եղանակով (ընդ որում՝ տարբեր աշխատողների համար կարող են նաև նախատեսվել շաբաթվա մեջ տարբեր օրեր կամ տարբեր ժամեր).

3) հեռավար աշխատելու համար աշխատողն աշխատանքային պարտականությունները հեռավար եղանակով իրականացնելու մասին դիմում է ներկայացնում պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին՝ կցելով աշխատանքային պարտականությունները հեռավար եղանակով իրականացնելու անհրաժեշտության մասին հիմնավորումները: Դիմումը ստանալուց հետո առնվազն հինգ աշխատանքային օրվա ընթացքում տրվում է համաձայնություն կամ մերժում.

4) համապատասխան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը նաև կարող է աշխատանքային պարտականությունները հեռավար եղանակով իրականացնելու առաջարկություն ներկայացնել Աշխատողին, որը հաստատվում կամ մերժվում է աշխատողի կողմից առաջարկությունն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում.

5) աշխատանքային պարտականությունները հեռավար եղանակով իրականացնելու մասին կողմերի համաձայնությունը ձևակերպվում է գրավոր՝ համապատասխան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի իրավական ակտով, որն աշխատանքի էական պայմանների փոփոխություն չի համարվում: Ընդ որում, գրավոր համաձայնություն կարող է համարվել նաև ինչպես աշխատանքային պարտականությունները հեռավար եղանակով իրականացնելու մասով նշումն աշխատանքային պայմանագրում (կարող է նաև աշխատողի հետ կնքվող աշխատանքային պայմանագրում ի սկզբանե աշխատանքը հեռավար կատարելու տարբերակը ամրագրվել), այնպես էլ կողմերի գրավոր համաձայնությունը համաձայնագրով ամրագրելը.

6) աշխատանքային պարտականությունները հեռավար եղանակով կատարելու ժամանակահատվածում աշխատողը պետք է ապահովի աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարումը, ինչպես նաև անմիջական ղեկավարի համար իր հասանելիությունը՝ փոխադարձ համաձայնեցված եղանակով: Աշխատողի մեղքով այս պահանջի չկատարումը համարվում է աշխատանքային կարգապահության խախտում.

7) աշխատանքային պարտականությունները հեռավար եղանակով կատարումը հիմք չէ աշխատողի՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված իրավունքներն ու երաշխիքները սահմանափակելու համար.

8) հեռավար աշխատանքի դեպքում աշխատողներին համայնքի կողմից համապատասխան սարքավորումներ և նյութեր չեն տրամադրվում, ինչպես նաև չեն փոխհատուցվում դրանց ձեռք բերելու հետ կապված ծախսերը:

9) Հայաստանի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունից դուրս հեռավար աշխատանք կատարելու դեպքում՝ աշխատանքի վայր ներկայանալու հետ կապված ծախսերը համայնքի կողմից չեն հատուցվում, որն աշխատողի համար չի համարվում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով սահմանված գործուղում:

**8. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ, ԴԱՎԼԻՃՆԵՐՈՒՄ ԵՎ
ՆԱԽԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

64. Հայաստանի Հանրապետության դրոշը պետք է լինի ամբողջական, մաքուր և չգունաթափված:

65. Հայաստանի Հանրապետության դրոշի երկարության հարաբերությունը դրոշածողի երկարության նկատմամբ կարող է լինել 1:1,7-ից ոչ պակաս:

66. Հայաստանի Հանրապետության դրոշը ուղղահայաց դիրքով կախելու դեպքում պետք է ժամացույցի սլաքի ուղղությանը հակառակ 90 աստիճանով շրջել այնպես, որ դեմքով դեպի դրոշը կանգնելիս կարմիր, կապույտ, նարնջագույն գույների հերթականությունը ծախից աջ չխախտվի:

67. Բարձրացված Հայաստանի Հանրապետության դրոշի ներքևի մասը պետք է գտնվի գետնից 2,5 մետրից ոչ պակաս բարձրության վրա:

68. «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքով սահմանված կարգով մշտապես բարձրացված Հայաստանի Հանրապետության դրոշը գիշերային ժամերին պետք է լուսավորվի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2024 թվականի N 2440

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի տարածքում գտնվող չորացած, գերհասուն, սանիտարական նորմերին չհամապատասխանող, հատման ենթակա ծառերն ուսումնասիրելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից 18.10.2024 թվականին կազմված արձանագրությունը, «Նեցուկ ՀԶ» ՀՈԱԿ-ի տնօրեն, հանձնաժողովի նախագահ Հայկ Համբարձումյանի 23.10.2024 թվականի թիվ 03Ա/100 զեկուցագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 51-րդ հոդվածով, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով՝ **որոշում եմ**.

Տալ թույլտվություն Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի թիվ 22 հասցեում առկա 1 /մեկ/ թեքված եղևնու հատման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 31
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2024 թվականի N 2441

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի տարածքում գտնվող չորացած, գերհասուն, սանիտարական նորմերին չհամապատասխանող, հատման ենթակա ծառերն ուսումնասիրելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից 18.10.2024 թվականին կազմված արձանագրությունները, «Նեցուկ ՀՁ» ՀՈԱԿ-ի տնօրեն, հանձնաժողովի նախագահ Հայկ Համբարձումյանի 21.10.2024 թվականի թիվ 03Ա/95, 03Ա/96, 03Ա/97, 03Ա/98, 03Ա/99, 03Ա/101, 03Ա/102, 03Ա/103, 03Ա/104 և 03Ա/105 զեկուցագրերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 51-րդ հոդվածով, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով **որոշում եմ.**

Տալ թույլտվություն Վանաձոր համայնքի «Կոնգոյի» գերեզմանատանը առկա 1 /մեկ/ թեքված եղևնու, Դեմիրճյան-Շիրակացի հատման խաչմերուկից դեպի Տիգրան Մեծ փողոցի հատվածում առկա 2 /երկու/չորացած ծառերի, Բաթումի 5, Լազյան 18, Տիգրան Մեծի 21 հասցեներում առկա 10 /տաս/ ծառերի, Թումանյան 8-4/5 հասցեում առկա 1 /մեկ/ չորացած ծառի, Մյասնիկյան 18 շենքի մոտ, Զորյան փողոցի մայթեզրին առկա 1/մեկ/ չորացած ծառի, «Գլորիա» կարի ֆարիկային հարակից մայթեզրին առկա 1 /մեկ/ վտանգ ներկայացնող ծառի, Տիգրան Մեծի 67բ հասցեում առկա 1 /մեկ/ եղևնու, Թումանյան 8-11 հասցեի մայթեզրին առկա 1 /մեկ/ չորացած ծառի, Մոսկովյան 56 և 58 շենքերի դիմաց, մայթեզրին առկա 2 /երկու/ չորացած ծառերի, «Սայաթ-Նովայի» անվան այգում առկա 9 /ինը/ չորացած ծառերի հատման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 31
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2024 թվականի N 2442

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
ԱՇԹԴ/517/510-24 ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏՈՒՄ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 24 հոկտեմբերի 2024 թվականի թիվ
ԱՇԹԴ/517/510-24 ավարտական ակտը (շահագործման թույլտվություն), ղեկավարվելով
«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝
որոշում եմ.

Վանաձոր համայնքի ղեկավարի 24 հոկտեմբերի 2024 թվականի թիվ ԱՇԹԴ/517/510-24
ավարտական ակտից (շահագործման թույլտվություն) հանել «Սոֆիկ Միրզախանյան» բառերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 31
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2024 թվականի N 2443

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԳՈՒ ԱՐԹՈՒՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարգարիտ Սարգսի Ալեքսանյանի դիմումն իր ծնողազուրկ անչափահաս թոռան նկատմամբ հոգաբարձություն սահմանելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 08-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 24, կետ 3), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 35-րդ հոդվածով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Տարոն-4, Բելառուսների թիվ 2 շենքի, թիվ 9 բնակարանի բնակիչ Մարգարիտ Սարգսի Ալեքսանյանին (ծնված՝ 06.09.1962թ., նույնականացման քարտ՝ 002598654, տրված՝ 06.05.2015թ., 018-ի կողմից) նշանակել իր անչափահաս թոռան՝ Գոռ Արթուր Վարդանյանի (ծնված՝ 16.06.2008թ., ծննդյան վկայական՝ ԲԱ 450324, տրված՝ 09.09.2021թ., Վանաձորի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից) նկատմամբ հոգաբարձու մեկ տարի ժամկետով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 31
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2024 թվականի N 2444

ԱՍՅԱ ԲԱԳՐԱՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՊԱՏՐՈՆԱԺ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ասյա Բագրատի Գրիգորյանի դիմումն իր նկատմամբ պատրոնաժ սահմանելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 08-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 24, կետ 4), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Զաքարյան փողոցի թիվ 12 շենքի, թիվ 9 բնակարանի բնակիչ՝ Բելլա Ռաֆայելի Գրիգորյանին (ծնված՝ 06.01.1984թ., անձնագիր՝ AP 0342264, տրված՝ 14.05.2015թ., տրված՝ 070-ի կողմից) նշանակել իր մոր՝ Ասյա Բագրատի Գրիգորյանի (ծնված՝ 28.10.1951թ., ծննդյան վայրը՝ Աղրբեջան, անձնագիր՝ AX 0479941, տրված՝ 17.07.2024թ., 070-ի կողմից) նկատմամբ պատրոն (օգնական):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 31
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2024 թվականի N 2445

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ԹԻՎ 10/1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, «ՍՏԵԼՍՏՈՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՐԹՈՒՐ ՍԱՄՎԵԼԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ,
ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓԻՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 1520 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Սամվելի Սուքիասյանի 16.04.2024 թվականի, թիվ 02/7160 դիմումը, Վանաձոր քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, 13.05.2024թ Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1865224 վկայականը, 28.11.2007 թվականի Վանաձոր քաղաքային համայնքի ղեկավարի թիվ 1317 որոշումը, 06.12.2007 թվականի հողատարածքի վարձակալության թիվ 653 պայմանագիրը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով և 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի 10/1 հասցեում գտնվող, Արթուր Սամվելի Սուքիասյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի զբաղեցրած, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 20.0քմ մակերեսով հողամասը, հողի կադաստրային արժեքով՝ 323550 (երեք հարյուր քսաներեք հազար հինգ հարյուր հիսուն) դրամով, նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արթուր Սամվելի Սուքիասյանին:

2. Փոխել Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի 10/1 հասցեում գտնվող 0.0020հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

3.Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 04 հուլիսի 2024 թվականի «Վանաձոր քաղաքի Տ. Մեծի 10/1փ հասցեում գտնվող Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված հողամասը նախապատվությամբ վարձակալության իրավունքով «ՍՏԵԼՍՏՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադելու, կառուցապատման իրավունքը և Վանաձոր համայնքի ղեկավարի 01 հուլիսի 2024 թվականի թիվ 1472 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1520 որոշումը:

4.Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Արթուր Սամվելի Սուքիասյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառելի վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2024թ. հոկտեմբերի 31
ք. Վանաձոր



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2024 թվականի N 2446

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀՈՂԱՄԱՍ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-084-0093-0017) ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գագիկ Գերասիմի Նալբանդյանի (ծնված՝ 18.01.1952թ.) 24.09.2024թ. թիվ 02/16178 դիմումը, ով հանդիսանում է նաև Արմինե Գագիկի Նալբանդյանի, Մխիթար Գագիկի Նալբանդյանի, Մարգարիտա Սուրենի Նալբանդյանի, Արթուր Մխիթարի Նալբանդյանի և Գայանե Մխիթարի Նալբանդյանի լիազորված անձը, 05.09.2024թ. տրված թիվ 50ԱՎ0943363 (նոտարական ակտի կոդ: 763-20240924-64-8364183) լիազորագրի ուսերենից հայերեն թիվ 7254 թարգմանությունը, 25.07.2024թ. թիվ 5607 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20240725-79-816596), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08122021-06-0038 վկայականը, 09.07.2024թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 4991 (նոտարական ակտի կոդ: 763-20240630-84-8083498) և ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 4992 (նոտարական ակտի կոդ: 763-20240709-84-8108632) վկայագրերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման թիվ /195027/ քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի, գյուղ Շահումյան հողամաս (ծածկագիր: 06-084-0093-0017) հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 2-րդ փողոց, 56 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 31
ք. Վանաձոր